

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Պայմանագիրը դադարում է գործել.
 - 1.1 Պայմանագրի գործողության ժամկետի ավարտվելու դեպքում,
 - 1.2 Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների ամբողջությամբ կատարելու դեպքում,
 - 1.3 Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում ամբողջ ապահովագրավճարի կամ Պայմանագրով ապահովագրավճարի տարածամկետ վճարման կարգ սահմանված լինելու դեպքում դրա հերթական մասի չվճարված լինելու պարագայում Ապահովագրողի կողմից Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում,
 - 1.4 դատարանի կողմից Պայմանագրի անվավեր ճանաչվելու դեպքում,
 - 1.5 կողմերի համաձայնությամբ կամ կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում:
Վերջին դեպքում Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մտադրության մասին կողմերը պարտավոր են տեղեկացնել միմյանց գրավոր ձևով՝ դադարեցման նախատեսված ամսաթվից ոչ պակաս, քան 15 օր առաջ,
 - 1.6 Ապահովագրողի լուծարման դեպքում,
 - 1.7 Ապահովադրի (իրավաբանական անձ) լուծարման կամ Ապահովադրի (ֆիզիկական անձ) մահվան դեպքում, եթե Ապահովագրված անձը կամ այլ ոք չի ստանձնել Ապահովադրի ապահովագրավճարի վճարման պարտականության կատարումը,
 - 1.8 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
2. Պայմանագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարման դեպքում, եթե ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականությունը չի

վերացել, Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3. Եթե Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության վերանալու պատճառով, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարում է այլ պատճառներով, քան տվյալ ապահովագրական պատահարի տեղի ունենալն է, Ապահովագրողն իրավունք է ձեռք բերում ապահովագրավճարի մի մասի նկատմամբ՝ համամասնորեն այն ժամանակին, որի ընթացքում գործել է Պայմանագիրը:

4. Ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով կնքված Պայմանագրի և միանվագ վճարված ապահովագրավճարի պայմաններում Ապահովադրի ցանկությամբ Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին Պայմանագրի գործողության ժամկետի չլրացած օրերին համամասնորեն հաշվարկված ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերով (ապահովագրավճարի 35%), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե Պայմանագրով նախատեսված չեն այլ պայմաններ:

Վերադարձման ենթակա ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$VU = \frac{(U - 35\% * U) * n}{N} - Z,$$

U՝ ապահովագրավճար,

35%*U՝ Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսեր,

n՝ Պայմանագրի գործողության ավարտին մնացած օրերի քանակ,

Z՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,

N՝ Օրերի քանակը, որով կնքվել է Պայմանագիրը,

ՎU՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար:

5. Եթե Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվում է Ապահովագրողի նախաձեռնությամբ՝ պայմանավորված Ապահովադրի կողմից սույն Պայմաններով և Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանգամանքով, ապա Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման: